ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Դեպի Եվրոպական հարեւանության գործողությունների ծրագիր. «Կառավարություն / ՈՉ կառավարական հատված» համագործակցության եզրերը

19 Սայաթ Նովա, Երեւան

Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

«Եվրամիությունը եվրոպական ժողովրդավարական պետությունների ընտանիք է», որտեղ նոր աշխարհակարգի ձևավորման հրամայականի ներքո մեծ տեղ է հատկացվում Հարավային Կովկասին: Ձևավորված նոր պայմաններում անվտանգության, տնտեսական և քաղաքական բազմաթիվ նոր խնդիրներ են ծագում: Այդ խնդիրները նաև Հայաստանինն են, իսկ դրանք լուծելու համար անհրաժեշտ գործողությունների ծրագրի մշակման գործընթացն արդեն իսկ մեկնարկված է:

Եվրոպան, բնականաբար, օժանդակության ձեռք է մեկնելու հիմնականում նրանց, ովքեր առավելագույն պատրաստակամություն կցուցաբերեն և վստահություն կներշնչեն խոստումների իրականացման տեսանկյունից: Այսօր մեր առջև կանգնած է իրապես «մրցունակ» ծրագիր մշակելու խնդիրը: Անշուշտ, լուծումների շարքում է տարբեր երկրների փորձից ու ընթացող բարեփոխումներից «գրագողության» տարբերակը, որով ընդամենը կապահովենք գործողությունների ծրագրի առկայություն՝ հույս դնելով ստանձնածի իրականացման շուրջ պատրանքի հետագա խորացման վրա: Սակայն, եթե կա կամք և կղզիացած չմնալու ցանկություն, ապա իսկապես կարիք ունենք առավել մրցունակ գործողությունների ծրագրի մշակման և իրականացման: Եվրոպական արժեքները խարսխված են համագործակցության վրա, և միջտարածաշրջանային և հասարակություն–կառավարություն համագործակցության սկզբունքով գործողությունների ծրագրի մշակումը կարող է դառնալ մրցակցային ծրագիր ունենալու կարևոր նախապայմաններից մեկը:

Եվրոպայի «նոր հարևանը» Հայաստա՞նն է, թե՞ լոկ ՀՀ կառավարությունը

Այսօր պետական օղակներում գործող շատ մասնագետներ իսկապես լծվել են գործողությունների ծրագրի մշակման կարևորագույն գործընթացին: Նվազագույն պահանջը, որ դնում է նոր հարևանների քաղաքականությունը, այն է, որ ծրագիրը պետք է մշակվի հնարավորինս ներկայացուցչական մի մարմնի կողմից: Սակայն, արդյոք դա զուտ պետական գործառույթ է: Այդ դեպքում արդյո՞ք ՀՀ կառավարությունը պատրաստ է իր դուռը բացել այս հարցում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների առաջ, թե փակ դռների քաղաքականության կողմնակիցներն առավել շատ կգտնվեն: Սա հռետորական հարց չէ և ոչ էլ հատվածային շահի խնդիր: Խոսքը, պարզապես, վերաբերում է նույն փոխադարձ օգուտներին, որոնց գիտակցումը առավելագույնս կնպաստի Հայաստանի գործողությունների ծրագրի թե՛ մշակմանը և թե՛ հետագայում դրա շուրջ պարտականությունների ստանձնմանն ու իրագործմանը:

Համագործակցություն. պատրա՞նք, թե՞ իրական հնարավորություն

Հասարակական հատվածի ակտիվիստները տեսնում են համագործակցության առավելագույն մակարդակ: Նրանք քաջածանոթ են չարչրկված համագործակցության «կեղծանմանակային» գործընթացներին և այս հարցում նման մտավախության հիմքեր ունեն: Ոչ կառավարական հատվածը պատրաստակամություն է հայտնում իր լուման ունենալու գործողությունների ծրագրի մշակման բոլոր փուլերում: Պաշտոնական մոտեցումն այս հարցում դեռևս սաղմնավորման փուլում է. մի կողմից առկա է համագործակցության ցանկություն և դրա օգուտների գիտակցում, մյուս կողմից՝ գործընթացի նկատմամբ ուղղակի վերահսկողության կորստի մտավախություն:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է արձանագրել.

1. թե՛ հասարակությունում և թե՛ պետական օղակներում բոլորը չէ, որ իրազեկ են Եվրոպայի հետ առավել բարձր մակարդակի համագործակցության օգուտների ու հնարավորությունների մասին,
2. մինչդեռ գործընթացն իրոք գերակայող նշանակություն ունի, սակայն գործն արագ և առանց ավելորդ «գլխացավանքների» ավարտելու ցանկությունը թերևս կարող է իրագործվել միայն որակի զոհաբերման հաշվին,
3. նախկինում ստանձնած պարտավորությունների իրագործումը նույնպես ազդելու է այս գործընթացի վրա:

Մինչդեռ պետք է հաշվի առնել նաև, որ.

1. «նոր հարևանների» միջև լինելու է խիստ անհատական մոտեցում և նրանց միջև մեծ մրցակցություն,
2. Եվրամիության կողմից Հայաստանի հետ համագործակցության աստիճանը հիմնվելու է իրական և ոչ թե պատրանքային գործընթացների վրա,
3. նախկինում ստանձնած պարտավորությունները ներառում են թե՛ դրական և, թե՛ բացասական ներուժ: Օրինակ, որոշիչ նշանակություն կարող են ունենալ առաջիկայում սպասվող ՏԻՄ ընտրությունները:

Եվրոպայի նոր հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում չպետք է անտեսել «թեժ» թեմաների առկայությունը: Ժամանակն է, որ իսկապես համատեղ ուժերով փորձ արվի քննարկման առարկա դարձնել ցանկացած թեժ թեմա ու լուրջ խնդիր: Խոստումներն առավել հեշտ կլինի կյանքի կոչել, եթե հասարակությունն իր մասնաբաժինն ունենա դրանց մշակման գործընթացում: Համագործակցության համար եզրագծված սկզբունքները հետևյալն են.

1. ռեսուրսների և հնարավորությունների համադրում ծրագրի նախապատրաստման բոլոր փուլերում՝ տարբեր ձևաչափերով,
2. գործուն և իրական հետադարձ կապի ապահովում,
3. թափանցիկություն և լայն համագործակցություն ՁԼՄ-ների հետ,
4. իրազեկության և տեղեկացվածության բարձրացում. հասարակությունը պետք է հստակ ճանաչի պարտավորությունները, գիտակցի նպատակներն ու իր շահը,
5. եվրոպայաբնակ սփյուռքի գործուն ներգրավում:

Ի վերջո, դեպի Եվրոպա ճանապարհը հասարակական պահանջարկի և նախաձեռնությունների ձևավորման ճանապարհն է:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ ապրիլի 11-ին «Եվրոպական հարևանության քաղաքականություն. ազգային զեկույցից դեպի գործողությունների ծրագիր: Ո՞րոնք են պետություն/հասարակական հատված համագործակցության եզրերը» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, մամուլի և միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ: